նալու համար։ Տ. Ներսէս Սրբ. գրած է Ս. Պատրիարքին թէ մինչև որ ուրիշ վարդապետ մը իրեն քով զրկուի, չի կրնար թողուլ որ Տ. Վահրիձ վարդ. Քոյի երթայ։ Կրօնական ժողովը կարդալով Տ. Ներսէս Սրբազանի սոյն նամակը, հաւանութիւն տուաւ Վահրիձ վարդապետի մնալուն։ Թէև Գէորգեան Տ. Արսէն վարդ. մը, ժամանակ մը Արմաշ մնալէ ետքը, ճամբայ հանուած էր դէպ իր ծննդավայրը, բայց անիկայ Լիմի և Կաուցի նոր վանահայր Տ. Յովսէփ եպս.-ին քով մնալու համար է՝ իրրև քարտուղար։

— Թոռոսզդոյի և Պրուսայի առաջնորդները ի մօտոյ իրենց վիճակը պիտի դառնան։

— Նպաստից Յանձնաժողովը Նիստ գումարելով Ազգ. Պատրիարքարանի մէջ, գաւառ. որբանոցներու, ինչպէս և Եսիգուլէի Ս. Յակոբայ Որբանոցի մասին խորհրդակցելէ վերջ, որոշեց բոլոր որբանոցաց երկերկու ամսեան մէջէն զրկել այս անգամ, ձմեռուան պէտքերն հոգալու համար։ Իմանալով նաև թէ Կարնոյ և այլ մի քանի գաւառաց ամերիկեան որբանոցներու մէջ պատսպարեալ որբերն եկեղեցի չեն զրկուիր և անոնց կրօնական ուսուցման խնամք չի տարուիր, որոշեց խնդիրը ներկայել Ամերիկեան կեդր. Որբախնամ մարմնոյն։

— Աֆիոն Գարահիսարցի վաճառական Սարգիս էֆ. Ըշըլեան 50 ոսկի նուիրած է Արմաշի Դպրեվանքին, ի նպաստ աղրիւրի մը շինութեան՝ վանքին մօտ և իրրև կալուած խանութի մը շինութեան։

— ՍիրբէՀի թաղի ծովեզերեայ Իսմայիլ փաշա խանին Սանաս. վարժարանին համար իրրև կալուած գնուելու գործողութիւնը լմնցեր է և 20,000 ոսկին վճռ. պրն. Ղ. Եղեանց Կ. Պոլիս զրկեր է՝ Լոնտոնի վրայ փոխ" գրով։

— Զաւէն ծ. Վ. Կարինէն Դերջան մեկնեցաւ հովուական պտոյտ մ'ընելու համար։

— Վարդավառի տօնին առթիւ Տ. Յարութիւն Ս. Պատր. հայրն հանդիսաւորապէս պատարագելով Ս. Յակոբեանց տաճարին մէջ, հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ օրուան տօնին վրայ և իր ունկընդիրները յորդորեց ի պայծառափայլ պլակերպութիւն՝ հոգւով, սրտով, մտքով և զգացմամբ։

— Տ. Ներսէս Սրբազան ստուգեր է որ Վանայ Սպակերտի գաւառին կարօտելոց անուամբ անգլ. նպաստամատոյց մարմնէն զրկուած 300 ոսկիի արմտիքը տեղացիք 150 ոսկիի ծախելով հնչուն դրամը գրպաներ են։ Այս պատճառաւ, իրեն եկող Սպակերացիներուն նպաստ չէ ուղեր տալ։ Ասոր վրայ, եկողները կաթոլիկներուն դիմելով, երկերկու մէջիտ առեր և իրենց արձանագրութիւնը փոխել տուեր են։

— Թէ Տ. Զաւէն ծ. Վ. և թէ Տ. Բարգէն ծ. Վ. կը խնդրեն Ս. Պատրիարքէն որ Տիրայր վարդապետ զրկուի Էրզրում կամ Մուշ։ Համակրելի արեղան կիսափաքի ընդունել այս գաւառային պաշտօններէն մին և արդէն նախապատուութիւն կուտայ Կարնոյ, քանի որ Կարմիր վանքին մէջ 100 որբ կան այսօր և կարելի ու պէտք է ամէն կերպիւ շնորհքով վիճակի մը մէջ դնել դիրքով ու տեղով կարևոր այդ վանքն ու հաստատութիւնը։

— Արմաշի Դպրեվանքէն Պօլսեցի պ. Դանիէլ Թուրեան և պ. Խաչիկ Խաչատուրեան, ուխտագիր տալով Տ. Եղիշէ եպս. Դուրեանին, կուսակրօնութեան վիճակն ընդունած են, և հիմա Ն. Գերապատուութիւն Ս. Պատրիարքէն և Կրօն. ժողովէն արտօնութիւն կինդրէ զանոնք աւագ սարկաւագ ձեռնադրելու։

— Բարիզ բնակող Էգնայեան եղբարք 6 որբ ուղած են, իրենց ծախքով արհեստ ուսուցանելու համար Բարիզի մէջ։

— Հեռագրուած է պատրիարքարան թէ Մշոյ Ս. Կարապետ վանուց փոխ վանահայր Թադէոս Վ. վախճաներ է ամսոյս 21-ին։

— Տիգրանակերտի առաջն. տեղապահ Եզեկիէլ Վ.-ի կրկնակի դիմումներուն վրայ, ամերիկեան որբանոցին 150-ի չափ որբերը և որբուհիները սկսեր են ամէն օր ազգային վարժարան և կիւրակի ու տօն օրերն ալ եկեղեցի յաճախել։

— Պանորմայի աղջկանց վարժարանին շինութիւնն սկսաւ տեսնելու արժանի է ժողովրդեան եռանդը։ Մանաւանդ երիտասարդաց, որք եռանդով կ'աշխատին հող, ջուր, քար կրելով։ Կը յուսացուի որ մի քանի ամիսէն ազգն իր անուան պատիւ բերող շէնքի մը տիրանայ։

— Կրօն. ժողովը որոշեց որ Կամախը մնայ Երզնկայի հոգևոր իշխանութեան ներքև։ Կամախի քահանան առաջն. փոխանորդ մնալու պայմանաւ։

— Պրուսայի առաջնորդ Տ. Յովհաննէս եպ. Արշարունի մեկնեցաւ իր պաշտօնատեղին։

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՑ «ԱՐԱՄԵԱՆ ԵՒ Ս. ԱՆՆԱՑԵԱՆ» ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ, 1896/7 ԵՒ 1897/8 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ։ *

Արամեան դպրոցում 1897/8 տարուայ սկզբին կային 95 աշակերտ։ Նոր ընդունուեցան 16 աշակերտ.

* Տես Արարատ 1899 թ. յունիս եր. 346։

ս. Աննայեան դպրոցում՝ 62 աշակերտուհի և նոր ընդունուեցան 14 աշակերտուհի, որով ընդամենը 111 աշակերտ և 76 աշակերտուհի եղան [1] ցաւելով պէտք է ասեմ որ տարուայ ընթացքում փոխանուեցաւ մի աշակերտ ու 5 աշակերտուհի. 10 աշակերտ կամովին հեռացան կամ արձակուեցան.

Հետևեալ կարգով էին տեղաւորուած աշակերտեալները և սոյն յառաջադիմութիւնները ցոյց տուին.

Արամեան դպրոց. Ս. Աննայեան դպրոց.

Դասարան.	Աշակերտ.	Փոխուեցան.	Մնացին.	Պակասեցան.	Աշակերտուհի.	Փոխուեցան.	Մնաց.	Պակաս.
I. բաժին. . .	13	13	—	—	18	16	1	1
II. » . . .	24	17	4	3	16	12	2	2
III. » . . .	18	14	4	—	20	15	5	—
Ա. դասարան. .	15	8	6	1	16	10	5	1
Բ. » . . .	17	7	6	4	6	5	—	1
Գ. » . . .	15	9	3	3	—	—	—	—
Դ. » . . .	9	8	1	—	—	—	—	—
	111	76	24	11	76	58	13	5

Այս ցուցակից երևում է, որ 187 աշակերտեալներից փոխադրուած են 134, մնացել են 37, որոնցից 27 առանց քննութեան ենթարկուելու և պակասել են 16. փոխադրութիւնը եղել է 72%.

Աշակերտներից աւարտման վկայական ստացան՝ 1) Պատմագրեան Առաքել. 2) Մկրտչեան Սիմէօն. 3) Յարութիւնեան Մելքոն. 4) Զաքարեան Վահան. 5) Տէր Յովհաննիսեան Յովհաննէս. 6) Մինասեան Գրիգոր. 7) Տէր Օհանեան Արտաշէս և 8) Յովհաննիսեան Ստեփան:

Աշակերտուհիներից աւարտեցին՝ 1) Սէֆխանեան Աննա. 2) Շահրազեան Վիկտորիա. 3) Նիկողայոսեան Կատարինէ. 4) Մահտ. Աստուածատրեան Հեղինէ և 5) Միրզայեան Տիգրանուհի.

Բոլոր 187 աշակերտեալներից, որոնց մէջ են հաշուած հանգ. Մ. Տէր Յակոբեանի 10 որդեգիրները, թոչակ են վճարել 124, իսկ 63 առանց թոչակի է ուսել (35 աշակ. և 28 աշակերտուհի), որով աւելի քան 33% ուսման վճար չի տուել. եթէ ի նկատի առնենք այդ վճարի փոքրութիւնը, այն ժամանակ կտեսնենք թէ ծնողների մի մասը որքան անփոյթ է դէպ հասարակական պարտաւորութիւնները.

Դպրոցից գիրք ու տետրակ բաշխուած է 16 աշակերտի ու 11 աշակերտուհու, այլ և հանգ. Մ. Տէր Յակոբեանի 10 որդեգիրներին.

187 աշակերտեալներից 7-ը հեռու քաղաքներից էին, 14-ը մեր շրջակայ գաւառներից՝ մեծ մասամբ Դարագաղից, 11-ը Լիլաւա թաղից, իսկ մնացեալ 155-ը սոյն Բերդաթաղից.

Բոլոր աշակերտեալներից 64-ը վաճառականների զաւակ էին, 36-ը արհեստաւորների, 48-ը այլ և այլ զբաղմունք ունեցողների և 39-ը որբ (ստուար մասամբ հօրից).

Աշակերտաց ընդունելութիւնը տեղի ունեցաւ 97 թ. սեպ. 1-ից. ուսումն սկսուեցաւ սեպտ. 4-ից. իսկ կանոնաւոր դասատուութիւնը սեպտ. 16-ից. օրիորդաց դպրոցում սեպտ. 19-ից: Դպրոցական օրերը տևեցին մինչև յունիս 6 և նրանց թիւը եղաւ 211, որից 15-ը քննութեան օրեր էին. կիրակի ու տօն օրերի թիւն էր 69.

Առարկաները բաշխուած էին հետևեալ ձևով.

1. Արժ. Տէր Աւետիք քահ. Ղազրեան—ունէր 15 դաս կրօնական առարկաներից. սկզբից մի դաս աւելի վերցրեց ռոճիկն էր 60 թուման.

2. Պ. Նիկ. Տէր Օհանեան—ունէր 22 դաս Հայոց լեզուից ու Հայոց պատմութիւնից. ռոճիկն էր 220 թուման.

3. Պ. Վ. Բժշկեան—ունէր 24 դաս. բնական ու չափակ. գիտութիւններից ու մարմնամարզից. 1 դաս աւելի վերցրեց. ռոճիկն էր 220 թուման.

4. Պ. Ս. Անդրէասեան—ունէր 28 դաս. կրօնական առարկաներից, երգեցողութիւնից ու գիտ. ուսումից, այլ և դպրաց խմբապետ էր. պարոնի ջանքերի շնորհիւ առաջին անգամ քառաձայն երգեցիկ խումբ ունեցանք (ըստ Եկմալեանի), Աւարտել է Գ. ձեմարանը 1897-ին. ռոճիկն էր 210 թուման.

5. Պ. Գ. Աղաջանեան—ունէր 25 դաս ցյուռնուար, ապա 28—ռուսերէնից, թուաբանութիւնից և ընդհ. աշխարհագրութիւնից. սկսել է հոկտեմբեր 29-ից. աւարտել է 1891-ին Ներսիսեան դպրոցը. ռոճիկն էր 240 թուման.

6. Պ. Մ. Շահրազեան—ունէր 26 դաս թուաբանութիւնից ու գծագրութիւնից, այլ և ֆրանսերէնի յատուկ ուսուցիչ չճարուելու պատճառաւ հոկտ. 23-ից ժամանակաւորապէս ստանձնեց 2 բարձր դասարաններում այդ լեզուի դասերը. ռոճիկն էր 200 թուման.

7. Պ. Յ. Յարութիւնեան—ունէր 26 դաս. Հայոց լեզուից ու գրութիւնից. փարում էր նաև քարտուղարութեան պաշտօնը, ռոճիկն էր 170 թ.

8. Պ. Դ. Կարապետեան—ունէր 28 դաս Հայոց լեզուից, թուաբանութիւնից ու գրութիւնից. ռոճիկն էր 140 թուման.

9. Պ. Ն. Գրիգորեան—ունէր 18 դաս. սկսեց հոկ. կէսից և 3 դաս աւելի պարապեց. ունէր թուաբանութեան, Հայոց պատմութեան, աշխարհագրութեան և Ֆրանսերէնի (ստորին դասարաններ-

[1] Աշակերտեալների նուազելու պատճառը խաղտիում պատահած մահն 20-ի խռովութիւնն էր, որի շնորհիւ մի քանի տասնեակ ընտանիքներ գաղթեցին ու հեռացան:

բում) դասեր. անկախ պատճառներով փետր. 17-ից չէ դասաւանդել երկիցս մի մի շաբաթուայ ընդմիջումով ոռճիկն էր 120 թուման.

10. Մ. Սաղբենան—ունէր 18 դաս Պարսկերէնից. ոռճիկն էր 72 թուման.

11. Պ. Ար. Գարագաշեան - ունէր 6 դաս երգեցողութիւնից ու կրօնից. վարում էր և վերակացուի պաշտօն. ոռճիկն էր 100 թում.

12. Օր. Մ. Պետրոսեան - ունէր 9 դաս ձեռագործից և կարուձևից. սկսեց սեպտ 29-ից իրրև երթևեկ վարժուհի. ոռճիկն էր 60 թուման.

13. Տիկին Ն. Խերոդինեան—ունէր 7 դաս, նաև վերակացուհու պաշտօն. ոռճիկն էր 50 թուման՝ բնակարանով հանդերձ. Խորին ցաւով պէտք է յիշեմ, որ յիշեալը քննութեան ժամանակ շատ կարճատև հիւանդութիւնից յետոյ մատաղ հասակում հանգեաւ ի Տէր խորին վիշտ պատճառելով ամենքին.

14. Նուաստս ունէր նաև 12 դաս Հայոց լեզուից և ընդհանուր պատմութիւնից. ոռճիկս էր 420 թուման.

Ինչպէս յիշուեցաւ 2 պաշտօնեայ հոկտեմբերի բ. կէսին են սկսել իրենց պաշտօնը. դրա մի պատճառը Վիրապեան ամուսինները եղան, որոնք խոստացել էին կրկին դալ, սակայն միայն սեպտ. 7-ին լուր տուին, որ ծանր տկարութեան պատճառով անկարող են ճանապարհուել.

Արժ. Տէր Աւետիս քհ. զաղթականների նրկատմամբ երկիցս Մուժամբար գնալու, քահանայական պարտաւորութեանց ու մասամբ տկարութեան պատճառով թողել է 71 դաս Պարսկերէնի ուսուցիչը մեծ մասամբ Առաջնորդարանի գործերով թողել է 76 դաս. պ. Գրիգորեանի արգելման պատճառով թողած դասերի գումարն է 109. միւս բոլոր ուսուցիչները միասին՝ անձնական տկարութեան ու պատահական արգելքների պատճառով թողել են 107 դաս. սրանց գումարն է 363 դաս. այս բաց դասերի մէջցին թէ բացակայող ուսուցիչներն և թէ առհասարակ միւսներն աւելի են պարապել 206 դաս. նաև ապրիլի 10-ին, երբ պ. Գրիգորեանի վերստին իր գործի գլուխն անցնելու մասին լուրերը բոլորովին տարակուսելի եղան, այն ժամանակ բոլոր ուսուցիչները կամովին նրա դասերն իրենք յանձն առին ըստ այսմ.

Արժ. Տէր Աւետիք քահ.—1 դ. Պ. Կարապետեան—3 դ. (2 միացեալ). Պ Գարագաշեան—4 դ. Պ. Յարութիւնեան 1 դ. Պ. Բժշկեան—4 դ. Պ. Աղաջանեան 1 դ. Պ. Տէր Օհանեան—2 դ. Նուաստս 4 դ.

Այսպիսով բաց մնացած դասերի գումարն է ընդամենը 157.

Մանկավարժական խորհուրդն ունեցել է 14 նիստ և զբաղուել է աշակերտների մտաւոր ու բարոյական, դպրոցական ծրագրի մշակութեան ու այլ խնդիրներով. Երկու դպրոցներիս ծրագրի մշակութիւնը, որ սկսուած էր նախորդ տարին, գլուխ բերուեցաւ. Աշակերտելոց մէջ ինքնակրթութեան ոգի զարթեցնելու համար խորհուրդն անհրաժեշտ համարեց ունենալ յատուկ մանկական գրադարան, որի հիմնարկութեան համար բացի մանաւոր ժողովարարութիւնից (60 ղուռն 45 կոպ.) փետր. 13 ին առանձին գրական—գեղարուեստական երեկոյթ տրուեցաւ, որից 647 ղուռն արդիւնք մնաց, եղելով 58 ղուռն 55 կոպ. ծախքը գրադարանի համար 648 ղուռն 90 կոպէկի մի գումար կազմուեց, որի հաշուով գրքեր պատուիրուեցան:

Դպրոցն ստանում էր մի մանկավարժական ամսաթերթ Ռուս լեզուով, Արարատը, որ նուէր էր պ. Թովմաս Թումանեանից և Աղբիւր ամսաթերթը.

Խորհրդի որոշմամբ հանդէս կատարուեցաւ ս. Վարդանանց տօնին.

Հրապարակական քննութիւններն սկսուեցան մայիս 20-ին և տևեցին մինչ յունիս 6. աւարտողները գրեթէ բոլոր առարկաներից հրապար. քննութիւն տուին, իսկ միւսները մեծ մասամբ դասարանական. սաստիկ թոյլերը թուով 27 քննութեան չենթարկուեցան.

Մերձաւոր հսկողութեան համար սոյն կարգով ընտրուած էին դասարանական դաստիարակներ, որոնք և յանձն առին ընթերցանութեանց առաջնորդող լինել:

Արամեան դպրոց. Ս. Աննայեան դպրոց.

Գ. դաս. Արժ. Տ. Աւետիք ք.

Գ. » Պ. Ն. Տ. Օհանեան. Ա. և Բ. միաց. դաս.—հանգ. տիկ. Ն. Խերոդինեան.

Բ. » » Վ. Բժշկեան.

Ա. » » Ս. Անդրէասեան

III. բաժ. » Գ. Կարապետեան III. Բաժ. պ. Յ. Յարութ.

II. » » Գ. Աղաջանեան. II. » պ. Ն. Գրիգորեան

I. » միացեալ—պ. Ար. Գարագաշեան.

Տղայոց և օրիորդաց I. բաժանմունքները կրկին միացած էին. ինչպէս և օրիորդաց Ա. և Բ. դասարանները մի սենեակում էին զետեղուած.

Օրհնելով մեծագործ հիմնադրի և այլ բարերարների յիշատակը, մաղթենք միևնոյն ժամանակ, որ երջանկայիշատակ հովուի անկեղծ անձնուիրութիւնն ու անխոնջ տոկունութիւնը թագաւորեն այս երկու հաստատութեանց բոլոր պաշտօնէից վրայ.

Տեսուչ՝

Ար. Ալէքսանեան.